



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ ընդհանուր իրավասության
առաջին ատյանի դատարանի վճիռ
վարչական գործ թիվ 0044/05/2010թ.
դատավոր՝ Կ.Մարդանյան

Վարչական գործ թիվ 0044/05/2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«21» սեպտեմբերի 2010թ.

ք.Ստեփանակերտ

ԼՂՀ Գերագույն դատարանը՝ վճռաբեկության կարգով,

Նախագահությամբ դատավոր
Դատավորներ՝

Ի.Կարապետյանի
Գ.Գրիգորյանի
Շ.Օհանյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի ԼՂՀ ԿԱ ՀՊԾ /այսուհետ՝
Ծառայություն/ ընդդեմ ԱԶ Արմեն Չալյանի՝ 497.8 հազար դրամ բռնագանձելու պահանջի
մասին վարչական գործով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի
/այսուհետ՝ Վարչական դատարան/ 2010թ. հուլիսի 21-ի վճռի դեմ ԱԶ Արմեն Չալյանի
վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան Ծառայությունը պահանջել է պատասխանող Ա.Չալյանից հոգուտ
պետական բյուջեի բռնագանձել 497.8 հազար դրամ:

Վարչական դատարանը 2010թ. հուլիսի 12-ի վճռով հայցը բավարարել է:

Նշված վճռի դեմ վճռաբեկ բողոք է բերել ԱԶ Արմեն Չալյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան է ներկայացրել Ծառայությունը:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ
հիմնավորումներով.

Բողոք բերողը գտնում է, որ Վարչական դատարանի վճիռն անհիմն է, կայացվել է դատավարական օրենքի խախտմամբ, ուստի ենթակա է բեկանման հետևյալ պատճառաբանությամբ.

Ըստ բողոք բերողի՝ Վարչական դատարանը խախտել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ և 24-րդ հոդվածների պահանջները:

Նշված պնդումները բողոք բերողը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը ճիշտ գնահատական չի տվել գործով առկա ապացույցներին, այն է՝ ստուգման ակտը կազմվել է իր բացակայությամբ, և կազմված ակտի մասին նա տեղեկացված չէր, սակայն դատարանը հիմք է ընդունել միայն Ծառայության կողմից ներկայացրած անդորրագիրը, որի գնությունից երևում է, որ ակտն ուղարկվել է Ադմ.Իսակով փողոցի 2/33 հասցեով, որտեղ 10 տարուց ավելի է, ինչ ինքը չի բնակվում: Մինչդեռ Ծառայությունը տեղյակ էր իր հասցեի փոփոխության մասին:

Բողոք բերողը նշում է, որ Ծառայությունը դատարանին է ներկայացրել իր հաշվետվությունը, որում առկա են մի շարք ջնջումներ, դատարանը, չնայած այն չի կցել գործին որպես ապացույց, սակայն դրել է վճռի հիմքում, չպահանջելով իրենից հաշվետվության մյուս օրինակը՝ համեմատելու և ճիշտ գնահատական տալու համար:

Խնդրում է մասնակիորեն բեկանել Վարչական դատարանի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

3.Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները.

Ծառայությունը պնդում է, որ վճռաբեկ բողոքի փաստարկներն անհիմն են, ելնելով հետևյալից.

Հասցեի փոփոխության վերաբերյալ հարկատուն պարտավոր էր տրամադրել տեղեկություններ, այսինքն, փոփոխված ներդիր ներկայացնել Ծառայությանը, իսկ Ադմ.Իսակովի 2/33 հասցեն որպես բնակության վայր նշված է անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման թիվ 001417 վկայականի թիվ 01 ներդիրում:

Բացի դրանից ԱԶ Արմեն Չալյանի կողմից ներկայացված հաշվետվությունների «Հաշվարկներ բյուջեների հետ» ձևաթղթի 790-րդ տողում արտացոլված է 150 հազար դրամ տուգանքի վերաբերյալ տեղեկությունը և առկա է ձեռնարկատիրոջ ստորագրությունը:

4.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

1. Ըստ 2009թ. սեպտեմբերի 4-ին Ծառայության կազմած հմ 000913 ակտի՝ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ԼՂՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն ԱԶ Արմեն Չալյանի նկատմամբ հաշվարկվել է տուգանք՝ 150.000 դրամ գումարի չափով:

2. Հարկային պարտավորությունների փոխադարձ հաշվարկների 2009թ. նոյեմբերի 7-ի ակտի համաձայն՝ ԱԶ Արմեն Չալյանի հարկային և պարտադիր այլ վճարների պարտավորության գումարը կազմում է 497.8 հազար դրամ:

3. Ծառայության 2009թ. սեպտեմբերի 4-ին կազմած հմ 000913 ակտը ԱԶ Արմեն Չալյանի կողմից սահմանված ժամկետում և կարգով չի բողոքարկվել:

5.ԼՂՀ Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ բողոքի հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ՝

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի համաձայն՝ նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը՝

1. չի կիրառել այն օրենքը կամ ԼՂՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը պետք է կիրառեր.

2. կիրառել է այն օրենքը կամ ԼՂՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը չպետք է կիրառեր.

3. սխալ է մեկնաբանել օրենքը կամ ԼՂՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը.

Նույն հոդվածի երկրորդ կետի համաձայն՝ նյութական իրավունքի նորմի խախտումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Նշված հոդվածների մեկնաբանությունից ուղղակիորեն հետևում է, որ ԼՂՀ Գերագույն դատարանը՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածով սահմանված իր լիազորությունների շրջանակներում, բեկանում է վերանայվող դատական ակտը և բավարարում վճռաբեկ բողոքն այն դեպքում, երբ վճռաբեկ բողոքում նշված փաստարկներն էական են գործի ըստ էության ճիշտ լուծման համար, և երբ վերանայվող դատական ակտն անհիմն և անօրինական է, և կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներով, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծմանը:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ հարկային պարտավորությունը ներառում է հարկերի..., ինչպես նաև հարկային օրենսդրությունը և ԼՂՀ-ում հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարների վճարումը:

Մույն գործի նյութերից պարզվել է, որ Ծառայության 2009թ. սեպտեմբերի 4-ին կազմած հմ 000913 ակտը պատասխանող ԱԶ Արմեն Չայանի կողմից սահմանված ժամկետում և կարգով չի բողոքարկվել, ինչպես նաև ակտն անվավեր ճանաչելու պահանջով հայցադիմում չի ներկայացվել:

Այսպիսով, գործով հաստատված փաստերի հիման վրա ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ Վարչական դատարանի հետևությունները հիմնված են գործում առկա այն ապացույցների հետազոտման և գնահատման վրա, որոնք բավարար են գործի ըստ էության ճիշտ լուծման համար, իսկ վճռաբեկ բողոքում բերված փաստարկները գործի ըստ էության ճիշտ լուծման համար էական նշանակություն չունեն, ուստի նշված պատճառաբանությունները բավարար հիմք են հանդիսանում ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի ուժով վճռաբեկ բողոքը մերժելու, իսկ Վարչական դատարանի բողոքարկվող դատական ակտն անփոփոխ թողնելու համար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ ԼՂՀ Գերագույն դատարանը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Անհատ ձեռնարկատեր Արմեն Չալյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի /վարչական դատարանի/ դատարանի 2010թ. հուլիսի 21-ի վճիռը թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

**Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Շ.ՕՀԱՆՅԱՆ**